



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ**

01/02.1/3502-14

2014 թ.

**Հ Ր Ա Մ Ա Ն Ն**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԵՆԹԱԿԱՅՈՒԹՅԱՆ ԱՐԳԵԼՈՑՆԵՐԻ, ԱՐԳԵԼՈՑ-ԹԱՆԳԱՐԱՆՆԵՐԻ ԵՎ ԹԱՆԳԱՐԱՆՆԵՐԻ ՏԱՐԱԾՔՆԵՐԸ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 2-րդ մասի «ե», «զ» կետերի և Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի սեպտեմբերի 11-ի N 1298-Ն որոշմամբ հաստատված N 1 հավելվածի 14-րդ կետի 4-րդ ենթակետի պահանջներով՝

**Հ Ր Ա Մ Ա Յ ՈՒ Մ Ե Մ`**

1. Սահմանել Հայաստանի Հանրապետության մշակույթի նախարարության ենթակայության արգելոցների, արգելոց-թանգարանների և թանգարանների տարածքները վարձակալության տրամադրելու ընթացակարգը՝ համաձայն հավելվածի:

2. Հայաստանի Հանրապետության մշակույթի նախարարության ենթակայության պետական ոչ առևտրային կազմակերպությունների (արգելոցների, արգելոց-թանգարանների և թանգարանների) տնօրեններին՝

1) արգելոցների, արգելոց-թանգարանների և թանգարանների տարածքները վարձակալության տրամադրելիս ղեկավարվել սույն հրամանի 1-ին կետով սահմանված ընթացակարգով,

2) սույն հրամանն ընդունվելուց հետո՝ 15 աշխատանքային օրվա ընթացքում, հաստատել դիմումի ձևը և սույն հրամանն ու դիմումի ձևը տեղադրել կազմակերպության կայքէջում:

3. Սույն հրամանի կատարման հսկողությունը վերապահել Հայաստանի Հանրապետության մշակույթի նախարարի տեղակալ Ա. Սամուելյանին:

ՆԱԽԱՐԱՐ`

Հ. ՊՈՂՈՍՅԱՆ

**Հովհ. Թումանյանի թանգարանի ցուցասրահի, ներքին այգու,  
ճակատային մասի հարթակների վարձակալության դիմումի ձև**

Խնդրում եմ, ս/թ .....

(Նշել օրը, ամիսը և միջոցառման տևողությունը)

.....-ին տրամադրել թանգարանի  
(կազմակերպության կամ ֆիզիկական անձի անունը)

.....

(նշել հատվածը՝ ցուցասրահ, ներքին այգի, ճակատային մասի հարթակներ)

.....

..... միջոցառման անցկացման նպատակով:  
(նշել միջոցառման նավանունը, նպատակը և համառոտ նկարագիրը)

**Միջոցառմանը սպասվում է շուրջ .... մասնակից**

**Միջոցառման կազմակերպման համար անհրաժեշտ է`**

.....

.....

(ներկայացնել օգտագործվելիք դեկորացիաների, սարք-սարքավորումների, ժամանակավոր տաղավարների, գովազդային պաստառների և այլ պարագաների ցանկը)

**Դիմող`** .....

Ֆիզիկական անձի դեպքում` բնակության վայրը, իսկ իրավաբանական անձի դեպքում` գտնվելու վայրը և հեռախոսահամարը.

.....

.....